ՔՀԿ ՉԱՓԻՉԻ ՄԱՍԻՆ

«ՔՀԿ չափիչը» գործիք է, որը մշակվել է Արևելյան գործընկերության (ԱլԳ) երկրներում գործող քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) միջավայրի կանոնավոր ու հետևողական մոնիտորինգին աջակցելու նպատակով: Այն բաղկացած է 11 տարբեր ոլորտների չափորոշիչներից և ցուցանիշներից, որոնք օգտագործվում են իրավական և գործնական միջավայրի գնահատման նպատակով: 2021 թվականի մոնիտորինգային հետազոտության արդյունքում «ՔՀԿ չափիչ» ծրագրի գործընկերները վերլուծել են ՔՀԿ միջավայրը վեց երկրներում՝ Հայաստանում, Ադրբեջանում, Բելառուսում, Վրաստանում, Մոլդովայում և Ուկրաինայում: Հայաստանում «ՔՀԿ չափիչ» ծրագիրը իրականացնում է Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնը, որը պատրաստել է 2021 թվականի զեկույցը՝ քաղաքացիական հասարակության զարգացման ոլորտում աշխատող կազմակերպություններ ներկայացնող փորձագետների և խորհրդատվական խմբի անդամների աջակցությամբ:

ՔՀԿ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՈԼՈՐՏՆԵՐՆ ԸՍՏ ԶԵԿՈՒՅՑԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԻ*

ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ	*ՔՀԿ-ները էական դժվարությունների չեն հանդիպում գրանցման և գործունեության ընթացքում*	5.7	5.8	5.6
ՀԱՎԱՍԱՐ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ	*Գրանցման և հարկման օրենսդրությունն ավելի նպաստավոր է մասնավոր հատվածի, քան ՔՀԿ-ների համար*	4.9	5.0	4.8
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆ	*ՔՀԿ-ները կարող են ֆինանսավորում հայցել, ստանալ և օգտագործել բոլոր օրինական աղբյուրներից, գործնականում կան ֆինանսավորման աղբյուրների համար ՔՀԿ-ների թիրախավորման դեպքեր*	5.4	5.8	4.9
ԽԱՂԱՂ ՀԱՎԱՔՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ	*Արձանագրվել են ոստիկանության ուժի անհամաչափ կիրառման դեպքեր, հավաքների նկատմամբ ոչ հետևողական գործողություններ*	5.3	5.7	4.9
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ	*Չնայած հանրության մասնակցության համար ստեղծված ինստիտուցիոնալ մի շարք մեխանիզմներին՝ վերջին երկու տարիներին ՔՀԿ-ները մասնակցության հետընթաց են նկատում*	4.8	5.3	4.3
ԽՈՍՔԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ	*Նկատվել է ատելության խոսքի, վիրավորանքի և ապատեղեկատվության աճ, դրանց դեմ պայքարին ուղղված օրենսդրական նախաձեռնությունները հիմնականում բացասաբար են գնահատվել ՔՀԿ-ների կողմից*	4.7	5.1	4.3
ՄԱՍՆԱՎՈՐ ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔ	*Արձանագրվել են անձնական տվյալների արտահոսքի դեպքեր, դրանց հետաքննության, հսկողության գործողությունների իրավաչափության վերահսկողության վերաբերյալ թափանցիկություն ու հաշվետվողականություն չկա*	4.8	5.8	3.8
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	*2021 թվականից ՔՀԿ-ները հանրային շահերը կարող են ներկայացնել ոչ միայն բնապահպանական, այլև հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ոլորտում, սակայն գործնականում այս իրավունքի իրացումը սահմանափակված է: ՔՀԿ-ներին վարկաբեկող մի շարք արշավներ եղան, սակայն իշխանությունները քայլեր չձեռնարկեցին ՔՀԿ-ներին պաշտպանելու համար*	4.6	5.3	4.0
ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ	*Նվիրատվությունները խթանող հարկային արտոնությունները քիչ են, իսկ բարեգործական ծրագրերի դեպքում հարկերից ազատման ընթացակարգը երկարատև է ու բարդ*	4.0	4.2	3.9
ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ՔՀԿ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ	*Պետություն-ՔՀԿ համագործակցության և ՔՀԿ դաշտի զարգացման վերաբերյալ ռազմավարական փաստաթուղթ չկա*	3.9	4.3	3.6
ԹՎԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ	*Առցանց հարթակներում խնդիրները կապված են լայնատարած ապատեղեկատվության և ատելության խոսքի հետ, այս խնդիրների լուծմանն ուղղված ջանքերը բավարար չեն և հիմնականում պատժիչ բնույթ են կրում*	4.2	4.9	3.5
ԵՐԿՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏՈՒՄ		4.8	5.2	4.3

Ոլորտ

Արձանագրված միտումներ

Ընդհանուր

Իրավական

Գործնական

* Գնահատման սանդղակը ներառում է 1-ից 7 բալ, որտեղ 1-ը ամենացածր հնարավոր գնահատականն է (ծայրաստիճան անբարենպաստ՝ ավտորիտար միջավայր), իսկ 7-ը՝ ամենաբարձր հնարավոր գնահատականը (չափազանց բարենպաստ միջավայր):

ՔՀԿ ՄԻՋԱՎԱՅՐԸ ԱԼԳ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ



ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Պատշաճ պաշտպանություն ՔՀԿ-ներին ուղղված ատելության խոսքից և ապատեղեկատվությունից
- Մասնակցության առկա ինստիտուցիոնալ մեխանիզմների լիարժեք օգտագործում, բովանդակալից մասնակցության ապահովում
- ՔՀԿ-ների համար ավելի բարենպաստ հարկային միջավայրի ապահովում
- Խորհրդակցական մարմինների ներուժի լիարժեք և արդյունավետ օգտագործում
- ՔՀԿ-ներին տրամադրվող պետական ֆինանսավորման շրջանակի ընդլայնում, ֆինանսավորման թափանցիկ, մրցակցային և հաշվետու հատկացում
- Քաղաքականության իրականացման և մշտադիտարկման փուլերում ՔՀԿ մասնակցության ընդլայնում՝ համապատասխան ինստիտուցիոնալ մեխանիզմների միջոցով
- ՔՀԿ հատվածի զարգացման համապարփակ ռազմավարության ընդունում՝ ավելի բարենպաստ միջավայրի ապահովման նպատակով

«ՔՀԿ չափիչ Հայաստան-2021» հետազոտության զեկույցին կարող եք ծանոթանալ ԹԻՀԿ կայքում՝ **https://transparency.am/hy/publication/279** հասցեով:

«ՔՀԿ չափիչ» ծրագրի նյութերին, տարածաշրջանային և մյուս երկրների զեկույցներին կարող եք ծանոթանալ ծրագրի կայքում՝ **www.csometer.info** հասցեով:

cso meter
www.csometer.info

European Center for Not-for-Profit Law

Funded by the European Union

ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ
հակակոռուպցիոն կենտրոն

Այս փաստաթուղթը մշակվել է Եվրոպական Միության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատու է միայն «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնը», և այն պարտադիր չէ, որ արտացոլի Եվրոպական Միության դիրքորոշումը: «ՔՀԿ չափիչ նպաստավոր միջավայրի և ՔՀԿ-ների իրավազորման կողմնացույց» ծրագիրն իրականացվում է «Ոչ առևտրային իրավունքի եվրոպական կենտրոն» (ECNL) հիմնադրամի և իր գործընկերների՝ Հայաստանում «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի», Ադրբեջանում «Էմ-Ջի Քընսալթինգ» ՍՊԸ-ի, Վրաստանում «Քաղաքացիական հասարակության ինստիտուտի», Մոլդովայում «Պրոմո-Լեքս» ընկերակցության, իսկ Ուկրաինայում՝ «Անկախ քաղաքական հետազոտությունների ուկրաինական կենտրոնի» (UCIPR) կողմից: